Հավելված
Երևանի քաղաքապետի
2024թ. հունվարի 11-ի
հ. 88-Ա որոշման

«Հավելված հ.9
Երևանի քաղաքապետի
2015թ. հունիսի 4-ի
հ. 1704-Ա որոշման»

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Վարչության նպատակը կրթության բնագավառում Երևանի քաղաքապետին վերապահված լիազորությունների, ինչպես նաև պետական կրթական քաղաքականության իրականացման ապահովումն է:

2. Վարչության խնդիրները և գործառույթները բխում են օրենքներով և այլ իրավական ակտերով կրթության բնագավառում Երևանի քաղաքապետին վերապահված լիազորություններից և կոչված են դրանց կենսագործմանը և /կամ/ իրականացմանը:

3. Վարչությունը՝

1) մշակում է կրթության բնագավառում Երևանի ավագանու, քաղաքապետի կողմից պետական կրթական քաղաքականության իրականացմանն ուղղված որոշումների և կարգադրությունների նախագծեր.

2) ապահովում է Երևանի ավագանու, քաղաքապետի որոշումների և կարգադրությունների, կառավարության, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հրամանների պահանջների կատարումն ու հսկողությունը.

3) մշակում է կրթության ոլորտին վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններ,

4) ապահովում է Երևանի ենթակայության հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) պետական կրթական քաղաքականության իրականացումը.

5) վերահսկողություն է իրականացնում ուսումնական հաստատությունների բնականոն գործունեության ապահովման նկատմամբ.

6) վերահսկողություն է իրականացնում ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարման, կրթական ծրագրերի իրականացման նկատմամբ՝ նախադպրոցական կրթության և հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան.

7) մասնակցում է ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատման գործընթացներին,

8) վարում է Երևան քաղաքի նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, համակարգում և վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը.

9) աջակցում և մասնակցում է ուսումնական հաստատության գործադիր մարմնի՝ սահմանած կարգով իրականացվող ընտրության, նշանակման և ատեստավորման գործընթացներին.

10) իրականացնում է ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման գործընթացը.

11)վերահսկում է ուսումնական հաստատություններում փորձարարական և նորարարական հնարավոր գործունեության իրականացման ընթացքը.

12) աջակցում է ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով ամրացված շենքերի նորոգման, շահագործման և պահպանման հարցերին.

13) վերահսկողություն է իրականացնում ուսումնական հաստատություններին ամրացված պետական և համայնքային սեփականության օգտագործման և պահպանության, ինչպես նաև ուսումնական հաստատության սեփականության պահպանության նկատմամբ.

14) մշակում է կրթության բնագավառում ՀՀ օրենսդրության պահանջների կատարումն ապահովող շրջաբերականներ, կրթության որակի բարձրացմանը նպաստող առաջարկություններ, աշխատանքային ծրագրեր, զարգացման ծրագրեր.

15) մշակում է ուսումնական հաստատությունների ստեղծման, վերակազմակերպման առաջարկություններ.

16) իրականացնում է համապատասխան տվյալների հավաքագրում, վերլուծություն, մշակում առաջարկություններ, իրականացնում կարողությունների զարգացման կրթադաստիարակչական աշխատանքների խթանմանը միտված ծրագրեր.

17) աջակցում է Քաղաքապետարանի ենթակայության ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի հարստացման, կրթական միջավայրի բարելավմանն ուղղված աշխատանքներին.

18) կազմակերպում է կրթական ոլորտի խնդիրներին նվիրված համաժողովներ, խորհրդակցություններ, սեմինարներ, ինչպես նաև օլիմպիադաներ, առաջնություններ, ուսումնադաստիարակչական և ռազմահայրենասիրական բնույթի այլ միջոցառումներ.

19) օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք է տալիս քաղաքացիների և կազմակերպությունների այն առաջարկություններին, դիմումներին ու բողոքներին, որոնց քննարկումը հանձնարարված է Վարչությանը.

20) Երևանի քաղաքապետի հաստատմանը ներկայացնելու համար մշակում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում Վարչության աշխատանքային տարեկան և եռամսյակային ծրագրերը.

21) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ: